ԱՄԻՐԱՆԵՐԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱԱՐՀԵՍՏԱՎՈՐԱԿԱՆ ԽԱՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊՈԼՍԱՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽՈՒՄ (XVIII դ. վերջ—XIX դ. առաջին կես)

Վ. Ս. ԱՃԶՅԱՆ

XVIII դ. երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունում սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամը գնալով ավելի էր խորանում։ Օսմանյան կայսրությունը պահպանում էր իր երբեմնի հզորության մնացորդները միայն։ Ավատատիրական տնտեսաձևը օրեցօր ավելորդ անգամ մատնանշում էր Թուրքիայի հետամնացությունը։ Պետական կառավարման անկատարությունը, կայսրությունում տիրող արատավոր բարքերը (կաշառակերություն, կամայականություններ, սադրանքներ և խարդավանքներ, բռնություններ) նպաստավոր պայմաններ էին ստեղծում օտարերկրյա պետությունների աղդեցության համար։

XVIII դ. վերջին և XIX դ. առաջին կեսին Օսմանյան կայսրության ճգնաժամի խորացման «նպաստավոր» հանգամանքներ էին պատերազմները (մասնավորապես՝ ռուս-թուրքական, 1768—1774 թթ., 1787—1791 թթ., 1806—12 թթ., 1828—29 թթ.), ինչպես նաև կախյալ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները։ 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմը ծանր անդրադարձավ արևմտահայության վրա։ «Մեծ վեզիր Կոջա Յուսուֆ փաշան ռազմական կարիքներն ապահովելու համար ոչ միայն սուլթանական հատուկ հրամանով ամբողջ երկրին ստիպեց պարդեղենը, ոսկին և արծաթը հավաքել, այլև, համաձայն Պողոս Կաղզվանցու տարեգրության, որպես աննախադեպ երևույթ, «մայրաքաղաքի հայերից և հույներից ռազմական ծառայության համար մարդիկ հավաքագրել, քրիստոնյա ու հրեա հպատակներին ենթարկել ծանր հարկատվության»[1]։ Հ. Սիրունին թերևս առավել դիպուկ է բնութագրել Օսմանյան կայսրության տարածքում, մասնավորապես Կ. Պոլսում բնակվող հայության վիճակը. «Պոլսոյ մեջ ամբողջ հինգ դար ապրեցանք մենք թուրքին հետ։ Ապրեցանք՝ սակայն առանց զիրար ճանչնալու։ Նախ ահավոր անդունդը կար մեր միջեւ՝ անոնք տէր էին ու մենք ռայա»[2]։

Չնայած վերը նշված պայմաններին, հայերը շարունակում էին Օսմանյան կայսրությունում ապրել, արարել և հասնել քիչ թե շատ որոշակի հաջողությունների կյանքի տարբեր բնագավառներում։ XVIII դ. վերջին և XIX դ. առաջին կեսին Օսմանյան կայսրության մայրաքաղաքը էականորեն տարբերվում էր կայսրության մյուս բնակավայրերից։ Մայրաքաղաքի «առանձնահատուկ» վիճակը ձգում էր մեծ թվով գավառահայերի։ Եթե XIX դ. սկզբին Կ. Պոլսում կար 150 հազ. հայ, ապա 1840-ական թթ.՝ 222 հազ. հայ։ Ինչպես մյուս գաղթօջախներում, հայաշատ քաղաքներում, այնպես էլ Կ. Պոլսում զարգանում էին արհեստները, առևտուրը։ «Կ. Պոլսո մեջ Օսմանյան տիրապետության շրջանեն ասդին թե հայ վաճառականներ և թե հայ արհեստավորներ սկսած են վերստին հետզհետե զարգանալ։ Ասոնց կորիզը կազմած են գլխավորաբար այն հայերը, որոնք պարսկական երկիրներեն ու Գարամանեն (Կիլիկիա) բռնի կերպով Կ. Պոլիս գաղթել

---

1 Մ. Կ. Զուլալյան, Հայ ժողովրդի 13—18-րդ դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Ե., 1990, էջ 244։

2 Հ. Ճ. Սիրունի, Պոլիս և իր դերը, հ. 1, Բեյրութ, 1965, էջ 51։

արված են»[3]։ Ինչպես տեսնում ենք, Կ. Պոլսի առևտրաարհեստավորական խավը հիմնականում եկվոր էր։

Իրականությանը մոտ էր նաև այն պնդումը, որ «վաշիտառուները և բանկիրները ևս գրեթե բացառապես ոչ մուսուլմաններ էին։ Այս բանում, անկասկած, արտահայտվել է նաև իսլամական արդելքը՝ տոկոսով փող տալու վերաբերյալ»[4]։ Կ. Պոլսի և, կարելի է ասել, ընդհանրապես Թուրքիայի տնտեսական կյանքում նշված ժամանակաշրջանում արդյունավետ և բեղմնավոր գործունեություն էին ծավալել հայ ամիրաները։ XVIII դ. վերջը և XIX դ. առաջին կեսը ամիրաների դասի ձևավորման, զարգացման և ծաղկման ժամանակաշրջանն էր։ Ամիրա տիտղոսը XVI դ. սկսած շնորհվում էր Օսմանյան կայսրության մեջ տնտեսության այս կամ այն ոլորտում պատկառելի հաջողությունների հասած հայազգի անձնավորություններին։ Անկասկած այն բանից, թե ամիրաները ինչպիսի դեր են խաղացել արևմտահայ և մասնավորապես պոլսահայ իրականության մեջ, նրանք անջնջելի հետք են թողել մեր պատմության մեջ։ Ինչպես նկատել է Լեոն, թեև «մոքալաքների դասակարգին Կ. Պոլսում համապատասխանում էր ամիրաների դասակարգը...»։ Սակայն անդրադառնանք ամիրաների և ամիրայական ներդասանների գործունեությանը։ Ամիրայական դասը սկսեց ձևավորվել XVIII դ. վերջերին։ Ամիրաների թե՛ այս սերնդի և թե՛ մյուսների մասին արժեքավոր սկզբնաղբյուր են Հ. Մրմրյանի «Մասնական պատմություն հայ մեծատուններու» և «Թուրքահայոց վաճառականությունն և վաճառականքը» մենագրությունները։ Այս փուլում ամիրաների դասին բնորոշ էր ձևավորման ժամանակաշրջանին հատուկ անկայունությունը[8]։ Ամիրաները, դիմակայելով բազմաթիվ դժվարությունների, ձգտում էին հաստատուն դիրքով դրսևորվել և մեծատունի համբավ ձեռք բերել։ Հ. Մրմրյանը նշում է մի շարք տուներ, որոնք XVIII դ. վերջին գրեթե հաջողությունների էին հասել. «1799 առաջնակարգ մեծատուն հայերն էին ի Կ. Պոլիս՝ Ադնաուրյան Դասդար, Տատեսյան Հովհաննես, Լեմոնճյան Հովհաննես և Կյուլլապյան Հակոբ տղաները»[7]։ Ընդհանրապես, XVIII դ. վերջին իրենց գործունեությունը սկսած պոլսահայ բազմաթիվ ամիրաներից քչերին հաջողվեց ավելի քան քառորդ դար հաջողությամբ գործել։

Չնայած հայ ամիրաները առավելապես կենտրոնացած էին Կ. Պոլսում, բայց նրանց ջախջախիչ մեծամասնությունը եկվորներ էին։ Նրանց մի մասը Կ. Պոլիս էր եկել Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից։ Մի շարք երևելի ամիրայական գերդաստաններ Ակն քաղաքից էին։ Ակն քաղաքի ծնունդ էին Ճեղայիրյաններ, Խորասանճյաններ, Միրիճանյաններ, Փիշմիշյանները, Ադնաուրյանները, Արփիարյանները, Բինկյանյանները, Տատյանները և այլն։ Թ. Ադատյանը «Ակն և ակնցիք» մենագրության մեջ սեղմ և ամփոփ նկարագրում է վերոհիշյալ ամիրաների գործունեությունը։ Ահա թե ինչ է ասվում Մկրտիչ ամիրա Ճեղայիրյանի մասին (1805—1861), «...իր շրջանին ամենեն կարկառուն դեմքը եղած է. մատուցած պետական և ազգային ծառայություններով։ Վարած է տարիներ Օսմանյան կայսրության մաքսային վերատեսչությունը։ Թուրքիո մեջ տարածած է երկար գործություններ և մետաքսագործությունը՝ բանալով շատ մը գործարաններ։ Ուսանողներ ղրկած է Եվրոպա. անոնցմե Գրիգոր Աղաթոն Ա հայ նախարարը եղած է։ Իր ազդեցիկ դիրքին շնորհիվ կայսերական արտոնություն ձեռք կը բերե հաստատելու Գերեզմանը և հոգևոր ժողովները։ Սա-

---

3 Հայաստանի կոչնակ, 1928, թիվ 37։

4 Գ. Ե. Երեմեն, Թուրքերի ծագումը, Ե., 1975, էջ 235։

5 Լեո, Հայոց պատմություն, հ. 4, Ե., 1984, էջ 96։

6 Հ. Գ. Մրմրյան, Մասնական պատմություն հայ մեծատուններու, Կ. Պոլիս, 1902, էջ 71։

7 Նույն տեղում, էջ 85։

տարած է դրականության: Նորոգած է Խասգյուղի Ներսեսյան դպրոցը և իր վրա առած ամբողջ բարեկարգության հարցը: Ճեզայիրլյան Մկրտիչ ամիրա ունեցած է չարանախանձ հակառակորդներ, որոնք փութացուցած են իր անկումը»[8]: Կ. Պոլսում պակաս մեծ դեր չի խաղացել Միրիճանյանների գերդաստանը. «Ինչ ակնցի այս գերդաստանեն ծանոթ են երկու դեմքեր—Գաբրիել ամիրա, Շնորհք Մկրտիչ ամիրա: Երկուքն ալ արքունի առաջնակարգ սեղանավորներ: Մկրտիչ ամիրա ծնած է 1742-ին, իր բարձր ուսումը ստացած է Իտալիա: Դարձին նվիրված է պետական և ազգային ծառայության: Իր մեծագործությունները զինքը իր շրջանին ամենեն ազդեցիկ անձնավորությունը հանդիսացուցած են: Շնորհք ամիրա (այս տիտղոսին արժանացած է Կաղզվանցի Զաքարիա պատրիարքին կողմե) 1790-ին ձեռք բերած է Իսթանպուլի առաջին թաղային դպրոցը (Գումղափու) բանալու կայսերական ֆերմանը: Այս դպրատան մոտ հիմնած է նաև տպարան մը, իսկ 1794-ին Պեյօղլուի մեջ հիմնած է հիվանդանոց մը: Ամեն ուղղությամբ իր համայնքին օգտակար հանդիսացած է և մեռած 1800-ին»[9]: Այսպես կարելի է բազմաթիվ ակնցի ամիրաների կենսագրական և տնտեսական գործունեության օրինակներ վկայաբերել:

Ամիրաների բնորոշ զբաղմունքներից էր սեղանավորությունը (սարաֆություն), և պատահական չէր, որ շատ ամիրաներ, սեղանավորական ընկերություններ ստեղծելով, բնակչությունից հարկեր էին գանձում և մեծացնում իրենց եկամուտները: Սեղանավորները միայն դրամափոխությամբ չէ, որ զբաղվում էին. օգտվելով այն հանգամանքից, որ Թուրքիայում փաշաները, որպես «պախավոր» հարկահավաքներ, վատ համբավ էին ձեռք բերել, հայ ամիրա-սեղանավորները միջնորդի դեր էին խաղում փաշաների և բնակչության միջև: Այս բոլորով հանդերձ, ամիրայության մասին խոսելիս պետք է նշել, որ այդ դասի ներկայացուցիչներից ոմանց հաջողվեց հասնել պատկառելի հաջողությունների և արժանանալ բարձրաստիճան այրերի մեծ վստահության: Խոսքը վերաբերում է այն 4 գերդաստաններին (Տատյան, Տյուզյան, Պեզճյան և Պալյան), որոնց գործունեությունը անջնջելի հետք թողեց գաղթավայրի պատմության մեջ:

Ակնի Ամուշլու գյուղից գաղթած և արհեստագործությամբ զբաղվող Մահտեսի Առաքել Տատ ամիրան՝ Տատյան գերդաստանի հիմնադիրը, 1795 թ. կանչվում է պալատ և նշանակվում արքունի վառոդարանի ղեկավար: Դրանից հետո արքունական վառոդապետի մենաշնորհը 75 տարի շարունակ մնում է Տատյանների ձեռքին, ավելին, նրանք թղթի արտադրությունը և բանակի հանդերձավորումը նույնպես իրենց տնօրինության տակ են վերցնում: Տատյանները, բացի տնտեսական գործունեությունից, զբաղվում են բարեգործությամբ. մասնավորապես՝ Տատյան Սիմոն ամիրայի (1786—1832) միջոցներով է կառուցվել Այ- Ստեֆանոյի հայոց եկեղեցին, Պողոս բեյ Տատյանը (1800—1863) նյութապես օժանդակել է արևմտահայ նշանավոր մտավորականներ Հ. Սվաճյանին և Հ. Պարոնյանին: Հովհաննես բեյ Տատյանը (1789—1869) կառուցել է Մարիք գյուղի հայկական եկեղեցին: Իմիջիայլոց նշենք, որ ամիրաները, ինչպես նաև պոլսահայ վաճառականները, լինելով ունևոր անհատներ, գրեթե առանց բացառության բարեգործություն են արել: Իսկ Տատյանները այնքան մեծ վստահություն էին ձեռք բերել սուլթանական արքունիքում, որ որոշ հետազոտողներ սուլթան Մահմուդ II-ի (1808—1839) դահակալության շրջանն անվանել են «Տատյանի դար»:

Տյուզյան գերդաստանը նույնպես տնտեսական և ֆինանսական հաջողությունների է հասել Կ. Պոլսում: Սարգիս Տյուզյանը XVIII դ. սկզբին Կ. Պոլիս էր եկել Դևրիկից: Տյուզյանները չելեպի պատվանունն էին

8 Ե. Ա. Ազատյան, Ակն և ակնցիք, Իսթանպուլ, 1913, էջ 55:

9 Նույն տեղում, էջ 55:

կրում։ Հարկ է նշել, որ չելեպիությունը նախորդել է ամիրայությանը։ Դեռևս XVI գ. սկսած, Օսմանյան կայսրությունում զբաղվելով սեղանավորությամբ, առևտրական գործունեությամբ, ինչպես նաև արքունիքում վարելով արհեստապետության պաշտոններ՝ հարստացած հայ երևելիները կրում էին նաև չելեպի անունը։ Չնայած չելեպիները որպես խավ ասպարեզից դուրս մղվեցին XVIII գ. սկզբին, բայց թե XVIII դ. ընթացքում և դեռ XIX դ. սկզբին որոշ ամիրաներ և մեծատուններ կրում էին չելեպի մականունը։ Տյուզյանների ֆինանսական հզորության սկիզբը դրեց Միքայել չելեպի Տյուզյանը (1724—1783), որը տնօրինում էր սուլթանական փողերանոցը և միաժամանակ զբաղվում ոսկերչությամբ։ Իսկ XVIII գ. վերջին և XIX դ. սկզբին Տյուզյանները, մեծ հարստություն կուտակելով, զբաղվում էին նաև տարանցիկ առևտրով, վարկեր էին տրամադրում և նույնիսկ այլևս վեզիրներին հաշվետու չէին։ Ամիրայական մյուս գերդաստաններից նրանք տարբերվում էին նրանով, որ, մերժելով հայ լուսավորչական կրոնը, ընդունել էին կաթոլիկություն, կապվել Վենետիկի և Վիեննայի մխիթարյանների հետ։ Ինչպես Տատյանները, Տյուզյանները ևս Օսմանյան կայսրության թողտվությամբ Կ. Պոլսում և Արևմտյան Հայաստանում XIX դ. առաջին կեսին կառուցում են գործարաններ։ Տյուզյանները նույնպես զբաղվում էին բարեգործությամբ։ Բացի կրթօջախներ հիմնելուց, ընչազուրկներին հաց և գեղորայք տալուց, նրանք հիմնեցին «Արշարունյաց ընկերությունը» և «Դիտակ Բյուզանդյան» պարբերականը։ Բայց Տյուզյանների «վերելքը» երկար չտևեց։ Ինչպես արդեն նշվեց, Օսմանյան կայսրությունում կամայականությունները և կարգավանքները սովորական երևույթ էին. 1819 թ. օգոստոսի ճակատագրական եղավ Տյուզյանների համար, սուլթանի կողմից արքունական փողերանոցի տեսուչ հրեա Հալեթ էֆենդին. «հայտնապես քրիստոնեից թշնամի, և հատկապես Տյուզյանց դեմ ոխացող անձ մը»[10], Տյուզյաններից պահանջում է հաշվետվություն գանձարանի ելք ու մուտքի վերաբերյալ։ Ստուգումները «պարզում են», որ 32 հազ. թուրքական ոսկու պակասորդ կա։ Մեղադրանքը կեղծ էր, բայց կայսրությունում ոչ ոք հետամուտ չէր արդարության։ Մյուս կողմից, պոլսահայ երևելիները կարող էին ֆինանսական պակասորդը փակել, բայց դա տեղի չունեցավ. «Երևելի իշխանք ազգիս ոչ միաբանութեամբ ջանացան ի պաշտպանութիւն պանծալի տանն այնորիկ՝ կալով առ տէրութեանն երաշխաւոր պարտուց նոցա, զորս զիսաւ կարէին վճարել, եթե ելանէին ի բանտէ ազնուասերունդ ալայազատքն»[11]։

Ինչ էր պատճառը. մեր կարծիքով, կար 3 հիմնավոր հանգամանք. մի կողմից՝ Տյուզյանների այլադավանությունը, մյուս կողմից՝ ամիրայական գերդաստանների միջև գոյություն ունեցող մրցակցությունը և երրորդ՝ սուլթանական արքունիքի բարեհաճ վերաբերմունքից զրկվելու վտանգը ստիպում էին գաղթօջախի ազգային երևելիներին հեռու մնալ նման միջադեպերից։ Պատիժը առավել քան դաժան էր։ 1819 թ. դեկտեմբերին Տյուզյանների արական սեռի ներկայացուցիչները աքսորվում են Փոքր Ասիայի հեռավոր բնակավայրերը և գլխատվում։ Տյուզյանների ունեցվածքը թալանվում է և կողոպտվում. «Իսկ պալատուն կահ կարասիքը, ամեն զարդերը, ճոխությունք, եվրոպական ամենեն ճարտարարվեստ ձեռագործք՝ հափշտակվեցան, պալատնին մերկ կողոպուտ դարձավ, որուն միայն կահ կարասիքը և տիկնայց զոհարները կ՚արժեր կ՚ըսեն, 80 հազար քսակ կամ 40 միլիոն ղուրուշ, որոնք որդվոց որդի անցեր էին»[12]։ Այս ողբերգական պատմությունը ավելորդ անգամ ապացուցում է, որ Օսմանյան կայսրությունում ազգային փոքրամասնությունները, մասնավորապես հայերը, որ-

---

10 Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Գ, Երուսաղեմ, 1927, էջ 3452։

11 Ա. Պէրպէրեան, Պատմութիւն հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 102։

12 Մ. Նուրիխան, Պատմություն ժամանակակից, Վենետիկ. 1891, էջ 305։

քան էլ հարուստ լինեին, որքան էլ մեծ ազդեցություն ունենային սուլթանական բարձր ատյաններում, նրանց կյանքի և ունեցվածքի անվտանգությունը չէր երաշխավորված։ Տյուզյանների անկմամբ շատ հայ սեղանավորներ նույնպես ընկան ծանր իրավիճակի մեջ. «1820-էն 1835՝ մինչ Կ. Պոլսի հին սեղանավոր մեծ ակրնցիներ տեղի կուտային հնազանդեան գործի ու աշխարհի՝ ու թաղրեն, Կ. Պոլսի բանիմաց հայերը կր կեդրոնանային գլխավորապես Տյուզյանց պաշտպանությամբ»[13]։

Կ. Պոլսում XIX դ. առաջին կեսին մեծ հեղինակություն և վստահություն էր ձեռք բերել Պեզճյան գերդաստանից Հարություն ամիրան. «Պոլսո անցյալը պրպտող մը հանկարծ իր դեմը կը դտնե իր օրերուն վրա շուք ձգող այն մեծ անձնավորությունը որ Յարություն Պեզճյանն եղավ, համբավավոր խազեղ ամիրան»[14]։ Բացի մետաքսի առևտրով զբաղվելուց (ի դեպ, այդ պատճառով էլ ստացել էր խազեղ մականունը), նա զբաղվում էր նաև ջուլհակությամբ։ Պեզճյան ամիրային յուրովի է բնորոշում Ա. Պերպերյանը. «Սիրէր յոյժ կերակրել զսովեալս, զգեցուցանել զմերկս, ժողովել զօտարս, հանել ի բանտէ զարգելեալս, ազատել ի մահուանէ զպատժապարտս»[15]։

1807 թ. Հովհաննես Տյուզյան ամիրայի օգնությամբ Հարություն Պեզճյան ամիրան նշանակվել է արքունական դրամահատարանի հսկիչ, իսկ ապա նաև՝ սուլթան Մահմուդ II-ի անձնական սեղանավոր և խորհրդական։ Պեզճյան ամիրան, մոտիկ լինելով Բ. Դռան բարձրաշխարհիկ և հոգևոր գործիչներին, ֆինանսատնտեսական գործերից զատ, զբաղվել է այլ հարցերով։ Տյուզյանների նման Պեզճյանը ևս չի խուսափել աքսորանքից (1820 թ. Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանի պահանջով աքսորվել է, սակայն 1821 թ. ներման է արժանացել)։ Ներումից հետո Պեզճյանը նշանակվում է երկրի դրամահատարանի կառավարիչ և զգալի աշխատանք կատարում Օսմանյան կայսրության ֆինանսահարկային համակարգը զարգացնելու ուղղությամբ։ Հարություն ամիրա Պեզճյանը ազգային մեծ ծառայություններ է մատուցել. «Պեզճյան Յարութիւն Ամիրա Մարգարա առաջարկությամբ Պարսկահայ մեծահատոր Բառարանի և ի Վենետիկ նմանօրինակ բազմածախ գրքերու հրատարակմանց մեկենաս հանդիսացած է»[16]. 1823 թ. նրա ջանքերով է կառուցվել հայոց պատրիարքարանի նոր շենքը, Մայր եկեղեցին (1829), Ս. Փրկչի ազգային հիվանդանոցը (1833), մի շարք կրթօջախներ։ «Սուլթան Մահմուդի հետ Պեզճյանի ունեցած կապերուն շնորհիվ էր,—գրում է Հ. Սիրունին,—որ հայերը ստացան 1830-ին սուլթանին մեկ հրովարտակը սեփականությանը մասին Երուսաղեմի Ս. Փրկիչ վանքին»[17]։

1826 թ. սուլթանը ֆերման հրապարակեց երկրում կանոնավոր զորք ստեղծելու մասին, որը փոխարինելու էր ենիչերական գնդերին։ Որոշ ուսումնասիրողներ ենթադրում են, որ Պեզճյան ամիրան զգալի դեր է խաղացել վերոհիշյալ զնդերը վերացնելու գործում։ Մենք հակված չենք այդ կարծիքին. նախ՝ ներքական, հունական ապստամբությունները, ապա նաև եգիպտական ընդվզումներն առավել պատճառ են դառնում Բ. Դռանը ռազմական բարենորոգում իրագործելու համար, այնպես որ այս հարցում «խազեղ» ամիրայի դերը չպետք է գերագնահատել։ Ինչևէ, ինչպիսին էլ լինեն հանգամանքները, Հարություն ամիրա Պեզճյանը պոլսահայ ամիրաների ամենակարկառուն դեմքերից էր։

---

13 Հ. Գ. Մրմրյան, Թուրքահայոց վաճառականությունն և վաճառականք, Կ. Պոլիս, 1908, էջ 18։

14 Հ. Սիրունի, Պոլիս և իր դերը, հ. 2, Բեյրութ, 1969, էջ 66։

15 Ա. Պերպերյան, նշվ. աշխ., էջ 256։

16 Ա. Ալպոյաճյան, Շարք հայ կենսագրության, Կ. Պոլիս, 1893, հ. 3, էջ 157—158։

17 Հ. Սիրունի, նշվ. աշխ., էջ 75։

Ամիրայական առավել հայտնի գերդաստաններից առանձնանում են Պալյանները։ Թե՛ XIX դ. Օսմանյան կայսրության սուլթաններ և թե՛ ժամանակակից խորհրդական իշխանությունները պարտական են այս ամիրայական դերդաստանին, քանի որ Ստամբուլի ներկայիս վեհաշուք և հոյակերտ բազմաթիվ կառույցներ, որոնք քաղաքի այցետոմս են, Պալյանների աշխատանքի արդյունքն են։ Ընտանիքի նախահայրը համարվում է Պալի Քալֆան, որը XVIII դ. սկզբին Կեսարիայից եկել է Կ. Պոլիս և արքունիքում աշխատել, նախ՝ որպես «կառույցներ վերանորոգող», ապա՝ պալատական ճարտարապետ։ Գերդաստանի առաջին ներկայացուցիչը, որը առաջիններ կրեց Պալյան-ազգանունը, Գրիգոր ամիրան էր (1767—1831)։ Նա ոչ միայն պալատական ճարտարապետ էր, այլև սուլթան Սելիմ III-ի խորհրդականը։ Գրիգոր ամիրան բեղմնավոր ստեղծագործական կյանքով է ապրել. նրա կառույցներից են Գումդափուի Մայր (Ս. Աստվածածին) եկեղեցին (1628 թ.), լազմահավ մզկիթներ, զորանոցներ, պալատներ։ Պակաս բեղմնավոր չէր Գրիգոր ամիրայի որդու՝ Կարապետ ամիրայի գործունեությունը. բազմաթիվ պալատների, կրթօջախների, զորանոցների, եկեղեցիների և այլ կառույցների շարքում առանձնանում են երկու կառույց, որոնք Կարապետ ամիրայի ստեղծագործական տաղանդի արգասիքն են՝ Դոլմաբահչեի պալատը (1856 թ.) և Եգիգուլի Ս. Փրկչյան ազգային հիվանդանոցը (Հոլհ. ամիրա Ալիվերյանի հետ)։ XIX դ. առաջին կեսին, շարունակելով գերդաստանի մասնագիտական ավանդույթները, Կարապետ ամիրայի որդին՝ Նիկոդոս բեյ Պալյանը, Կ. Պոլսում կառուցել է պալատներ, մզկիթներ և այլ շինություններ։ Նա կրթություն էր ստացել Փարիզի Սեն-Պարպ բարձրագույն վարժարանի ճարտարապետության բաժնում։ Ինչպես Կարապետ ամիրան, այնպես էլ Նիկոդոս բեյ Պալյանը ակտիվորեն մասնակցել են հայ համայնքի հասարակական կյանքին։ Կարապետ ամիրան, օրինակ, 1847 թ. սուլթան Աբդուլ Համիդ II-ից ձեռք է բերել Ազգային հոգևոր և գերագույն ժողովների արտոնագիր։

Ինչպես յուրաքանչյուր խավ, այնպես էլ ամիրայությունը միատարր չէր։ Այս կապակցությամբ շատ դիպուկ է Հ. Մրմրյանի գնահատականը. «Կային այդ մեծատոհմերուն մեջ՝ տգետներ, ամբարտավաններ, մոլեռանգներ, թուլաբարոներ ու մանավանդ անխոհեմներ. կային՝ դիտակներ, համեստներ, ջերմեռանդներ, խստակրոններ ու խորագետներ այլ։ Եվ այդ երկու ներհակ տեսակները՝ նվազեցան կամ տեսեցին որոշեալ ատեն մը՝ իրենց այդ հակութեանց նվազության կամ ամրության, հոռության կամ լավության համեմատ»[18]։

Ամիրաների դերակշիռ մասն ապրում էր շքեղ առանձնատներում և պարանքներում[19]։ Բայց կային ամիրաներ, որոնք ավելի համեստ նիստուկաց ունեին և չէին տառապում ցուցամոլությամբ։ Ամիրաներին բնորոշ էր նաև ազգային-հասարակական գործունեությունը։ Միամտություն կլիներ կարծել, որ ամիրաները ազդեցություն չունեցան հայ համայնքի վրա, մասնավորապես Կ. Պոլսում։ Մինչև 1844 թ. կստեղծվեր Ազգային ժողովը, որը պետք է կարգավորեր պոլսահայերի ներքին խնդիրները, գաղթօջախի ղեկավար մարմին էր Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, որի վրա պատկառելի ազդեցություն ունեին ամիրաները. «Մինչև 1846, մեր մեջ ժամանակին ամենեն ազդեցիկ Ամիրան ազգապետ կը համարվեր։ Նորա շուրջ կը համախմբվեին ամիրայական համաստեղության եվազ փայլուն մոլորակներն, և Ամիրայից ժողով մը կը կառավարեր Ազգը»[20]։ Կան բազմաթիվ դեպքեր, երբ ամիրաների «անուղղակի» մասնակցությամբ փոխվել են

---

18 Հ. Գ. Մրմրյան, Մաճկան..., էջ 112—113։

19 Տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 103։

20 Բ. Քեչյան, Պատմություն Ս. Փրկչի հիվանդանոցին հայոց ի Կ. Պոլիս, Կ. Պոլիս, 1888, էջ 91։

պատրիարքները։ Հարկ է նշել, որ պատրիարքարանը ֆինանսավորվում էր ամիրաների կողմից։ Ընդհանուր առմամբ կարելի է այսպես ձևակերպել ամիրաների գործելակերպը. ավելի քան քառորդ դար Կ. Պոլսի համայնքի ղեկավարը պատրիարքարանն էր, սակայն փաստական իշխանությունը ամիրաների ձեռքին էր։ Լինելով ավատատիրական կարգերի ծնունդ՝ ամիրայությունը պայքարում էր այդ կարգերի անսասանության համար, սակայն ժամանակն իրենն էր թելադրում։ XIX դ. 40—50-ական թթ. և առավել ևս 60-ական թթ. հայ ամիրաների ազդեցությունը գաղթօջախի տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքում աստիճանաբար նվազում էր։ Դեռևս 1819 թ. հատուկ ֆերման էր հրապարակվել առևտրի վերաբերյալ, որի համաձայն արտոնություններ էին սահմանվում այն առևտրականների համար, որոնք առևտուր էին կատարում Եվրոպական երկրների հետ։ Ովքեր ցանկանում էին օգտվել վերոհիշյալ ֆերմանից, գանձարան էին մուծում 1500 ղուրուշ և ստանում էին սուլթանական բերաթ, որը նրանց ազատում էր իշխանության կամայականություններից և զերծ պահում ավելորդ հարկերի գանձումից[21]։

Միաժամանակ XIX դ. 20—30-ական թթ. սկսած աստիճանաբար ամիրայական դասի հետ սկսել էին մրցակցել Եվրոպայի հետ կապված բանկիրները։ Դա նոր ձևավորվող էֆենդիական խավն էր, որը ամիրայության դեմ մղվող պայքարում շատ հաճախ օգտագործում էր պոլսահայ էսնաֆություններին։ Միաժամանակ պետք է նշել, որ մինչ XIX դ. կեսերը նոր ձևավորվող պոլսահայ մագնատները սերտորեն կապված էին հտալական և հատկապես ֆրանսիական կապիտալի հետ. «Իտալական ու ֆրանսիական կապիտալի դերաղդեցիկ ուժին պետք է վերագրել հենց իտալական և մանավանդ ֆրանսիական ազդեցությունը պոլսահայ բուրժուազիայի «ալա-ֆրանկա» կենցաղի ու տարազի, լեզվի և գրականության, մամուլի ու թատրոնի և լուսավորական բովանդակ կյանքի վրա»[22]։ XIX դ. 40-ական թթ. սկսած անգլիական կապիտալը Թուրքիայում սկսում է լուրջ մրցակցության մեջ մտնել իտալա-ֆրանսիական կապիտալի հետ և այն իրականացնում է պոլսահայ վաճառականների ու մեծատունների միջոցով, որոնք արդեն կողմնորոշվել էին դեպի անգլիական շուկա։ Անգլիան ամեն կերպ ձգտում էր իրեն ենթարկել թուրքական հումքային շուկան և լավագույն պայմաններ ապահովել իր ապրանքների իրացման համար։ Այդ տեսակետից հատկանշական է 1838 թ. Օսմանյան կայսրության և Անգլիայի միջև կնքված առևտրական համաձայնագիրը, որը Թուրքիային արգելում էր իր տարածքում մտցնել արտահանման մենաշնորհ։ Միաժամանակ Բ. Դուռը պետք է համաձայնվեր 5 %-անոց ցածր մաքսային հարկի հետ, որ դրվում էր ներմուծվող անգլիական ապրանքների վրա։ Այսպիսով, մի կողմից Օսմանյան կայսրության համար անբարենպաստ արտաքին հանգամանքները, որը խորացնում էր նրա կախվածությունը օտարերկրյա կապիտալից, մյուս կողմից երկրի պետական ապարատում կատարվող փոփոխությունները (նախարարությունների ստեղծում, «Օտտոմանյան բանկի» վերականգնումը 1856 թ.) հայ ամիրաներին դուրս էին մղում իրենց ավանդական ոլորտներից։ Ինչպես նշվեց, ասպարեզ էին իջնում հայ էֆենդիները, որոնք եվրոպական կրթություն ստացած և օտար լեզուների տիրապետող անհատներ էին։ Լավ կողմնորոշվելով ժամանակի քառուղիներում՝ նրանք հաստատուն դիրք էին գրավում պոլսահայ իրականության մեջ։ Հետաքրքիր է, որ որոշ ամիրաներ նույնպես համալրեցին էֆենդիության շարքերը։

Կ. Պոլսի գաղթօջախի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրությունը թերի կլիներ, եթե չանդրադառնայինք քաղաքի առևտրաարհեստա-

---

21 Տե՛ս А. Д. Новичев, История Турции, т. 3, Л., 1973, с. 83.

22 Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Ե., 1955, էջ 353—354։

վորակոտ կյանքին։ Ջնայած երկրի ընդհանուր հետամնացությանը, մայրաքաղաքում աշխույժ առևտուր էր ընթանում. քաղաքում կային 1000-ից ավելի կրպակներ, որոնց մեծ մասը պատկանում էր հայերին։ Բացի այդ, կային բազմաթիվ շուկաներ, խաներ, վաճառանոցներ։ Որոշ ապրանքատեսակներ վաճառվում էին հատուկ շուկաներում։

Օրինակ, Աթ բազար, Դավութ բազար կոչվող շուկաներում վաճառվում էին ձիեր, ջորիներ, Եսիր բազարը ստրկավաճառության վայր էր (սուլթան Մուստաֆայի օրենքով, քրիստոնյա ազգերին արգելված էր ստրուկների առք ու վաճառքով զբաղվել), Ջևահիր բազարը թանկարժեք քարերի, ոսկյա և արծաթյա իրերի վաճառանոց էր, Օթուրաղճըլար բազարը՝ հանդերձանքի։ Ինչպես այլ մասնագիտությունների տեր մարդիկ, այնպես էլ Կ. Պոլսի հայ վաճառականները ստեղծել էին իրենց էսնաֆությունները (համքարությունները)։ Զարգացնելով առևտուրը և փող կուտակելով՝ հայ վաճառականները Թուրքիա և Կ. Պոլիս էին ներմուծում հետևյալ ապրանքները. հնդկական շալեր, համեմունքներ, գոհարներ, իրանական կերպասներ, մետաքսներ, արաբական բեհեզներ։ Եվրոպայից նրանք բերում էին կերպասներ, հայելիներ, գերմանական սաթ և այլն։ Առևտրական գործարքները հարստացնում էին նորաթուխ առևտրական բուրժուազիային։ Ինչպես նշվեց, XIX դ. 40—50 թթ. օտարերկրյա կապիտալը հաստատուն ձևով էր գործել Թուրքիա։ Եվ ահա հայ միջնորդ առևտրականները, տեսնելով իրենց գործունեության համար նոր ուղիներ, XIX դ. թողնում էին իրենց բնակության վայրերը և տեղափոխվում եվրոպական երկրներ, ընդ որում՝ իրենց կապերը չխզելով Թուրքիայի հետ։

Եթե պոլսահայ գաղութում ամիրաները սոցիալ-տնտեսական հարաբերություններում մեծ ազդեցության և դիրքի էին հասել, ապա սոցիալ-հասարակական կյանքում իրենց ինքնահաստատման ուղին էին հարթում արհեստավորները։ Ինչպես XVIII դ. վերջին, այնպես էլ XIX դ. սկզբին շարունակվում էր Արևմտյան Հայաստանի շատ քաղաքներից արհեստավորների գաղթը Կ. Պոլիս։ Շատ դիպուկ է բնութագրել Հ. Մրմրյանը Կ. Պոլսի այն ժամանակվա արհեստավորական մթնոլորտը. «Կամարակապ մեծ Շուկային պեզեսթեններեն սկսելով՝ մինչև Վեզիր խանի, Զուխաճի խանի, Քյուրքճի խանի, Վեյիտե Մեծ-նոր և Սյումպյուլ խաներու մեջ ու շրջակայքը բռնած էին արհեստական ու առևտրական կարևոր դիրքեր հին հայ շուխաճիները, գաղազները, ոսկերիչները, ակնագործները (ճեվահիրճի), թյուլպենտճիները, յազմաճիները, շալճիները, պեղճիները, մանրավաճառ մանիֆաթուրաճիները, դալփաքճիները, սահաթճիները, թոհավճիները, պիլեզիկճիները, անդացի դերձակները, հռչակավոր քյուրքճիները, տելլալները, երկաթավաճառներն ու չիլինկիրները»[28]։ Մայրաքաղաքի այս առևտրաարհեստավորական խայտաբղետ միջավայրում գերիշխող դիրք էին գրավում հայերը, հույները և հրեաները։ Ինչպես արհեստավորները, այնպես էլ բժիշկները, ուսուցիչները, օրամշակները միավորված էին էսնաֆությունների մեջ։ Սովորաբար յուրաքանչյուր էսնաֆություն ընտրում էր իր յուրատեսակ ղեկավար մարմինը, որը բաղկացած էր 3 անձից՝ նախագահ, գանձապահ և քարտուղար։ Այս 3 անձնավորությունները ընտրվում էին անորոշ ժամանակով, և նրանց մնալը այդ պատասխանատու պաշտոններում կախված էր նրանց գործելակերպից։ Էսնաֆությունները, մասնավորապես յուրաքանչյուր էսնաֆության ղեկավար մարմին, ոչ միայն կատարում էին իրենց ավանդական պարտականությունները (գանձարանի եկամուտների տնօրինում, արհեստավորների շահերի պաշտպանություն, կարիքի մեջ գտնվող արհեստավորների կամ նրանց ընտանիքների նյութական օժանդակություն), այլև հետևում էին արհեստավորների բարոյական նկարագրին (կային որոշ պատժամիջոցներ ծույլերի, հարբեցողների նկատմամբ)։

---

28 Հ. Մրմրյան, Թուրքահայոց վաճառականություն և վաճառականք, էջ 17։

Թվենք մի շարք արհեստավորական էսնաֆություններ, որոնք գործում էին Պոլսում XIX դ. կեսերին. զույումճի (ոսկերիչ), տոյուբենտճի (ծաղկարար, դաջող), հացագործ, քերեստեճի (փայտյա շինանյութ պատրաստող և վաճառող), սանդալջի (հողաթափ կարող), խերփի (դերձակ), սահաթճի (ժամագործ), դյուրկեր (հյուսն), աշչի (խոհարար) և այլն։ Կ. Պոլսի էսնաֆություններից ամենահեղինակավորը ոսկերիչներն էին։ Ոսկերիչների էսնաֆության մեջ մտնում էին նաև ոսկեղեն ու արծաթեղեն վաճառողները։ Քաղաքի մեծ շուկայում նրանց հատկացված էր մեծ տարածություն, և շատ հայ ոսկերիչներ հաջողությամբ մրցակցում էին եվրոպական ոսկերիչների հետ։

Սոցիալական շերտավորումը ակնառու էր էսնաֆություններում։ Վարպետները քիչ թե շատ լավ վաստակ ունեին, բայց աշխատանքի 60—70 % ծանրությունը իրենց ուսերին տանող ենթավարպետները և աշակերտները մի կերպ իրենց գոյությունն էին քարշ տալիս։ Ինչպես միջնադարյան Եվրոպայում, այնպես էլ Կ. Պոլսի էսնաֆություններում վարպետ դառնալու համար մոտ 15 տարվա տքնաջան, համառ աշխատանք էր պահանջվում, և աշակերտների հոծ բանակից վարպետի բարձր աստիճանի էր հասնում մոտ 20—30 %-ը։ Էսնաֆությունների մասին խոսելիս պետք է հաշվի առնել նրանց յուրահատուկ հակակշռող դերը պոլսահայ գաղթօջախում։ Էսնաֆությունները ձգտում էին մասնակից լինել գաղթօջախի կարևոր հարցերի լուծմանը։ Նրանց «ախոյանը» ամիրաներն էին, որոնք ձգտում էին առավելագույնս միանձնյա լուծել ազգային կյանքի ամենաբազմազան հարցերը։ Պոլսահայ էսնաֆությունների մի շարք հայտնի ելույթներից (1820 թ., 1826—29 թթ., 1841 թ.) հետո նրանք ևս Ազգային ժողովի միջոցով ի վերջո մասնակից դարձան գաղթօջախի ներքին կյանքի կառավարմանը։

Այսպիսով, պոլսահայ գաղթօջախի սոցիալ-տնտեսական պատկերը XVIII դ. վերջին և XIX դ. առաջին կեսին մեզ է ներկայանում իրեն հատուկ երանգներով։ Չնայած որ ամիրաներն իրենց հզորության գագաթնակետին հասան քննարկվող ժամանակաշրջանում, այնուամենայնիվ, չպետք է անտեսել այն փաստը, որ նրանք ուշ միջնադարում հաջողությամբ գործած խոջաների և չելեբիների օրգանական շարունակությունն էին։ Այնպես որ, ամիրայությունն ուներ իր խոր արմատները։ Լինելով տվյալ ժամանակահատվածի ծնունդ՝ ամիրաները ձգտում էին որքան հնարավոր է ճկուն գործելակերպ որդեգրել։ Մի կողմից, ամեն կերպ ցանկանում էին անսասան պահել իրենց տնտեսական հզորությունը և արժանանալ Բ. Դռան վստահությանը, մյուս կողմից, ձգտում էին վճռորոշ դեր ունենալ գաղթօջախի ազգային կյանքում։ Պոլսահայ գաղթօջախում տնտեսական աշխույժ գործունեություն ծավալած առևտրաարհեստավորական խավը իր հերթին ձգտում էր հնարավորության սահմաններում հաստատուն տեղ ունենալ հասարակական կյանքում։ Այս ամենով հանդերձ, պոլսահայ գաղթօջախը յուրահատուկ մի ամբողջություն էր, որը հաջորդ տասնամյակներին հասարակական-քաղաքական վերափոխումների առաջնորդը պետք է դառնար։

ДЕЯТЕЛЬНОСТЬ АМИРАЕВ И ТОРГОВО-РЕМЕСЛЕННОЙ ПРОСЛОЙКИ В КОНСТАНТИНОПОЛЬСКОЙ АРМЯНСКОЙ КОЛОНИИ (КОНЕЦ XVIII—ПЕРВАЯ ПОЛОВИНА XIX ВВ.)

В. С. АШЧЯН

Резюме

И в турецкой экономике, и в армянской среде весомую роль в вышеупомянутое время играли амираи. Эта богатая прослойка армян, ко-

торая занималась государственной и экономической деятельностью в свое время не только приобрела экономический потенциал, но и играла решающую роль в национальных вопросах колонии. Являясь консерваторами, амираи противились всему передовому. В жизни колонии особое место занимали ремесленники. В пестрой городской среде армянские ремесленники не только продолжили национальные ремесленические традиции, но и приобрели в колонии большой вес. Ремесленная прослойка стремилась принимать участие и во внутренних делах колонии. В этом вопросе интересы амираев и ремесленников не совпадали.